ԴԻ. Ն. ՏԷՐ-ԽՈՒՀԱԿԵԱՆ

ԴԻՑՏԵՐԻՏՏ

(ԱՌԱՐԿԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ)

№ 2.

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Սանոյեանցի և Սեխբանեանցի
1902

ԲԺ. Ն. ՏԷՐ-ԽՍԵՀԱԿԵՐՆ.

ԴԻՑՏԵՐԻՏ

(ՎԱՐԱԿԻՉ ԲԿԱՅԱՒ)

№ 2.

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Սանոյեանի և Ստեփանեանի
1902

Дозволено Цензурою 8 Іюня 1902 г. гор. Тифлисъ.

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Գրեթէ ամեն տարի լրագրներում կարդում ենք, որ Կովկասի այս կամ այն քաղաքում բուն են դրել մանկական հիւանդութիւններ և կոտորում են հարիւրաւոր անմեղ մանուկներ։ Մարդ խորապէս ցաւ է զգում, մտածելով թէ ինչպէս անխնայ կոտորւում են մեր ապագայի յոյսերը, շատ անգամ վերջին յուսահատութեան մէջ ձգելով իրանց թշուառ ծնողներին։

Անշուշտ մանկական հիւանդութիւնները Աստուածային պատիժ չեն, այլ նրանց երևան գալը՝ ըստ մեծի մասին արդիւնք են մարդկային տգիտութեան և անզգուշութեան։ Ուրեմն մօտ ծանօթանալով դրանց հետ, կարելի է փրկել շատ զոհեր։

Այդպիսի հիւանդութիւններից մէկն է նաև *դիֆտերիտը*։

Այս հիւանդութեան էութեան և նրա դէմ կռուելու, առաջն առնելու միջոցներին է նուիրուած գրքոյկս։ Եթէ ընթերցող հասարակութիւնը, կարողանայ օգտուել սրանում գտնուած խրատներից, այդ դէպքում ես ինձ մխիթարուած կ'զգամ, որ այժերս ներածի չափ նպաստել եմ մեր ժողովրդի գիտակցութեանը։

Բկացաւի դիֆտերիտ կոչուած տեսակը ժանտախտի *) նման *տարափոխիկ հիւանդութիւն* է, միայն զանազանութիւնը նրանումն է, որ դիֆտերիտը գլխաւորապէս տարածւում է փոքրահասակ մանուկների մէջ, այն ինչ ժանտախտն անխնայ կերպով կոտորում է թէ մեծին և թէ փոքրին, որոնք անզգոյշ են վերաբերւում դէպի այս հիւանդութիւնը։ Դիֆտերիտն էլ ժանտախտի նման ունի իւր յատուկ *միկրոբը*։ Դիֆտերիտի միկրոբը կամ *բացիլն* առաջին անգամ գտաւ գիտնական բժիշկ Լեոֆլերը, որի անխոնջ աշխատութեան շնորհիւ մենք մօտ ծանօթացանք այդ միկրոբի բնաւորութեան հետ։

Խոշորացոյցով դիտելիս՝ դիֆտերիտի բացիլը, գտնում ենք հիւանդի բկի փառերի և բերանի թուքի մէջ, այն ինչ նրա արեան և մարմնի մէջ բացիլներ երբէք չեն լինում։ Գիտնականները փորձերով հաստատ իմացել են, որ

*) Տես իմ գրքոյկը «Ժանտախտ կամ չումա»։

այդ բացիլները զարգանալով հիւանդի բկի մէջ, իրանցից թոյն են արտադրում, որը տարածուելով երակների միջոցով մարմնի մէջ, թունաւորում է նրան։

Եթէ բացիլը մեծացնենք մի քանի հարիւր անգամ, կըտեսնենք որ նրանք խմբուած են իրար մօտ մի քանի կետերում։ Սրանց անհատները նման են քորոցի, որի երկու ծայրերում տեսնւում են կոլոր գնտակներ։ Նրանք զարգանում են խիստ արագ և համարեայ մէկ օրում մէկ միկրոբը տալիս է միլիոնաւոր սերունդ։

Ի՞նչպէս է սկսւում հիւանդութիւնը։

Հիւանդաբեր բացիլը բուն է դնում գլխաւորապէս երեխայի բկի մէջ։ Այդ ժամանակ երեխան մի քանի օր ոչինչ չի զգում (դա գաղտնի շրջանն է)։ Այդ միջոցին բացիլներն աճում, զարգանում են երեխայի բկի մէջ և յետոյ սկսում են թոյն արտադրել, որի ներգործութիւնից հիւանդի մարմինը թունաւորւում և նա կարճ միջոցում այժից ընկնում է։ Թեթի հիւանդութեան ժամանակ, երեխան մի քանի օրում առողջանում, բոլորովին ուղղւում է. իսկ աւելի ծանր դէպքերում հիւանդութեան հետևանքը լինում է կամ մարմնի որևէ մասի անդամալուծութիւն կամ մահ։

Դիֆտերիտն այնպիսման կայծողական հիւանդութիւն է, այսինքն վարակուելու համար պէտք է որ առողջ երեխան մօտ յարաբերութիւն ունենայ հիւանդի հետ, օրինակ. շատ հեշտութեամբ վարակում է առողջին հիւանդի բերանի թուքը համբուրելիս՝ կամ թքոտ ձեռքով բարևելիս՝ եթէ մէջը բացիլներ լինին։ Հիւանդ երեխան այս ձևով կարող է վարակել իւր հետ բոլոր խաղացող — ընկերներին ոչ միայն իւր անկողնում պարկած ժամանակ, այլ և առողջանալուց 2—3 շաբաթ յետոյ։ Իհարկէ միևնոյն կերպով կարող են հիւանդութիւնը տարածել նրանք, որոնք հաւասարապէս յարաբերութիւն ունին թէ հիւանդի և թէ առողջի հետ։

Նկատուած է որ դիֆտերիտի ծանր տեսակը աւելի շուտ է փոխւում ուրիշին քան թեթիը։

Թէպէտ կարծում են, որ հիւանդութիւնը փոխւում է և օդի միջով, բայց այդ պատահում է միևնոյն տան մերձաւոր սենեակներում, երբ սենեակները սրբելուց, օդի միջի փոշին մէկ սենեակից միւսն է անցնում, տանելով իւր հետ իւր վրայ նստած բացիլը. *իսկ մէկ տանից միւսը՝ բացիլն օդով չի կարող անցնել։* Ուրեմն, եթէ հիւանդութիւնը յայտնւում է հարևան տան մէջ,

պէտք է հաստատ դիտենալ, որ յարաբերութիւն է եղել վարակուած տան հետ։ Սրանով պէտք է բացատրել դիֆտերիտի *դանդաղ* տարածուելու գաղտնիքը, համեմատելով կարմրուկի հետ, որը աւելի հեշտութեամբ է անցնում օդով։ Թէև բացիլներն, ինչպէս ասացինք, դժուարութեամբ են տեղափոխւում տանից տուն, բայց միւս կողմից պէտք է աչքի առաջ ունենալ, որ բացիլները մէկ տեղ բոյն դնելուց յետոյ դժուարութեամբ էլ ախտահանւում են։

Հիւանդութիւնը փոխւում է ոչ միայն հիւանդի և առողջի իրար հետ յարաբերութիւն ունենալուց, այլ և *տան պատերին կպած բացիլներից*, զանազան առարկաների միջոցով, օրինակ շորերից, երեխաների խաղալիքներից, մանաւանդ երբ նրանք *փակուած* են սենեակում, զուրկ մաքուր օդից, և նրանց՝ որոնց վրայ արևի լոյսը չի ընկնում։ Փակուած առարկաների վրայ խաշորացոյցով նայելիս՝ կարելի է բացիլներ գտնել նրանց վարակուելուց մի քանի տարի յետոյ էլ։

Դիֆտերիտի բացիլները ախտաջինջ են լինում 58 աստիճան տաքութեան մէջ։ Ուրեմն բաւական է միայն վարակուած իրերը եռացրած ջրում եփ տալ, և այնուհետև ապահով կարող ենք լինել վարակուելուց։ Նրանք ոչնչանում են նաև

արևի ճառագայթներից, եթէ արևի տակ մնան 3—4 շաբաթ, այդպէս էլ ոչնչանում են քամուց։

Հասկանալի է ուրեմն, որ քանի սենեակում լոյս լինի և օդը շուտ-շուտ փոխուի, այնքան շուտ կը մաքրուին իրերը վարակիչ թոյնից։

Թէ տեղի յատկութիւնները և թէ տարուայ եղանակը նպաստում են հիւանդութեան տարածուելուն։ Օրինակ. պատահում է որ մի որև է տեղում սկսւում է դիֆտերիտը և տարուայ մէջ հիւանդանում են միայն մի քանի երեխաներ. այդպէս շարունակ կարող է տեւել մի քանի տարի։ Ցանկարծ, անակնկալ կերպով շատանում են վարակման դէպքերը և համաճարակը սաստկանում է։

Կան տեղեր որտեղ հիւանդութիւնը շուտ-շուտ կրկնւում և հեշտութեամբ էլ վերանում է։ Կան և այնպիսի տեղեր, ինչպէս Ալէքսանդրապոլն է, որտեղ հիւանդութիւնն սկսուելուց յետոյ մեծ դժուարութեամբ է անհետանում։ Այս քաղաքում դիֆտերիտը յայտնուել է 1897 թուին, և ահա հինգ տարի է որ չի վերանում, տանելով բազմաթիւ զոհեր։

Պատահում է երբեմն, որ մի որևէ պիւղ շրջապատուած է լինում դիֆտերիտով վարակուած գիւղերով, բայց և այնպէս բոլորովին ազատ է մնում վարակուելուց։ Բազմաթիւ դիտողութիւնները ցոյց են տալիս, որ մեծ դժուարութեամբ դիֆտերիտը

չքանում է խոնաւ տեղերից, որպիսին է Ալէքսանդրապոլը։

Իսկ ինչ վերաբերում է տարուայ եղանակին, պէտք է ասել, որ ամենից շատ հիւանդութիւն պատահում է աշունքին, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին, իսկ ամառուայ շոր ամիսներում, եթէ պատահում է համաճարակ, շատ շուտ է անցնում։ Ուրեմն խոնաւ տեղը և հով եղանակը նպաստում են հիւանդութեան տարածուելուն և շատացնում են մահուան դէպքերը, ընդհակառակն, տեղի չորութիւնը և շոքը թոյլ չեն տալիս բացիլների զարգանալուն։

Մարդուս հասակը մեծ նշանակութիւն ունի դիֆտերիտով հիւանդանալու և հիւանդութեան հետևանքի վրայ։ Ամենից շատ հիւանդանում են դիֆտերիտով երեխաները 1-ից մինչև 10 տարեկան հասակում, իսկ 10-ից 15 տարեկան, ինչպէս և ծծկեր երեխաները քիչ են հիւանդանում. այս վերջինների մասին կարելի է ասել նաև, որ հիւանդանալուց յետոյ շատ շուտ են առողջանում. իսկ 15 տարուց յետոյ հիւանդացողների ու մեռնողների թիւը աւելի ևս քիչ է լինում։ Պատահում են դէպքեր, երբ մայրը, չնայելով մեծ տարիքին, երեխաների հետ միասին անկողին է պարկում միևնոյն դիֆտերիտ բկացուից, բայց իմարկէ

դրանց համար այնքան վտանգաւոր չէ թոյնը, ինչքան փոքրերի համար։

Վերոյիշեալ հասակների մէջ պատահում են այնպիսի երեխաներ, որոնք երբեք դիֆտերիտով չեն հիւանդանում, չնայելով որ գիշեր-ցերեկ անց են կացնում հիւանդների հետ միասին. ընդհակառակը կան և այնպիսիները, որոնք շատ տրամադիր են բկացաւով վարակուելու։ Այդ է պատճառը, որ երբ բժիշկն առաջարկում է հեռացնել առողջ երեխային հիւանդի մօտից, շատերը զանցառութեան են տալիս, առարկելով, որ իրանք գիտեն այնպիսի տուն, ուր մի երեխայ հիւանդ է եղել, իսկ միւսները անվնաս են մնացել։ Այս ասողներն աչքի առաջ չեն ունենում, որ այդպիսիները միայն բախտաւոր բացառութիւններ են։ Սրա հակառակ շատերը փորձով խստովանուում են, որ երբ մի տան մէջ դիֆտերիտ է յայտնուել, յաջորդաբար հիւանդացել են տան միւս երեխաները և մինչև անգամ դրացիների երեխաները, որոնք անզգուշութեամբ մօտեցել են հիւանդին։ Սովորաբար հիւանդութեան տրամադիր են լինում այն երեխաները, որոնց բուկը ամառ թէ ձմեռ մի փոքր ցուրտ զիպչելուց ցաւում է, և հարբուխ են լինում, կամ

որոնց նշաձև գեղձերը *) միշտ ուռած են լինում։ Այս բանի առաջն առնելու համար, պէտք է այդպիսի երեխաների վրայ առանձին ուշք դարձնել և նախապէս բժշկել։

Դիֆտերիտն էլ ուրիշ բոլոր վարակիչ հիւանդութիւնների նման ունի իւր գաղտնի շրջանը, այսինքն մի քանի օր հիւանդութիւնը ծածուկ է անցնում. այդ տևում է 2 — 5 օրից մինչև 18 օր։ Գաղտնի շրջանն անցնելուց յետոյ, սկըսում է իսկական հիւանդութիւնը, որը կարող է լինել իհարկէ հէնց առաջին օրից ծանր կամ թեթև։

Հիւանդութեան ծանր կամ թեթև տեսակները կախուած են երկու բանից — եթէ երեխան առաջուց թոյլ և հիւանդոտ է լինում, այդպիսիների վրայ թեթև տեսակ դիֆտերիտն էլ սաստիկ է ազդում, կամ թէ չէ, վարակող բացիլները լինում են վտանգաւոր տեսակից։ Բանը նրանումն է այնպիսի բացիլներ կան, որոնք վարակում են

*) Ծանօթ. Գեղձ խսլ. բերանի յատակը, կազմում է լեզուն, իսկ առաստաղը կոչւում է քիմք։ Սրա առջևի մասը պինդ է — ոսկր կաշիով ծածկուած, իսկ յետևինը՝ փափուկ և կախուած։ Փափուկ մասի մէջ տեղում, վերից վայր կախուած է լեզուակը, իսկ լեզուակի երկու կողմը կամարաձև իջնում և վերջանում են երկու նշաձև կոլոր գեղձերով։ Սրանց վրայ են զարդանում գլխաւորապէս դիֆտերիտի և ուրիշ հասարակ բկացաւերի բացիլները։ Սրանք են որ ուռչելիս՝ դժուարացնում են կուլ տալը։

հենց սկզբից սաստիկ կերպով, կան և այնպիսիները, որոնք մտնելով մարմնի մէջ, առաջացնում են հիւանդութեան շատ թեթև տեսակը, որը մի քանի օրում անցնում է առանց ամբողջ կազմուածքը վտանգի ենթարկելու։

Թեթև հիւանդը իրան ամբողջ ժամանակ բաւականին լաւ է զգում. տաքութիւնը բարձրանում է շատ քիչ, օրինակ մինչև 38°, իսկ երեսի գոյնը մնում է անփոփոխ, ինչպէս որ առողջ ժամանակն է, լեզուն չի շորանում, նրա բկի մէջ նայելիս՝ կարելի է նկատել միայն մի քանի հատ փոքրիկ սիսեռի մեծութեան կետեր, այն էլ միայն նշաձև գեղձերի վրայ, որոնք մի քանի ժամուայ ընթացքում մնանալով իրար հետ, արծաթէ 5 — 10 կոպէկանոցի չափ տեղեր են բռնում գեղձերի վրայ, իսկ լեզուակի և քմքի վրայ չի նկատւում ոչ մի սպիտակ կետ։ Փառերի շուրջը շատ քիչ կարմրած է լինում, բերանից վատ հոտ չի գալիս, ներքին ծնօտի գեղձերը կամ ուռած չեն լինում, կամ եթէ ուռչում են շատ չնչին մեծութեան են լինում։ Նրանց կարելի է մատով շօշափել ինչպէս փոքրիկ գնտակիկներ։ Այս գնտակիկները ոչ իրար են միանում և ոչ էլ կաշուի հետ։ Թեթև հիւանդութիւնը տևում է ընդամէնը 5 — 8 օր։ Հիւանդութեան

4—6-րդ օրում փառերն սկսում են պոկուիլ և մի երկու օրից յետոյ դիֆտերիտի բոլոր նշաններն էլ անցնում են, մինչև անգամ թուքը կուլ տալիս էլ ցաւ չեն զգում։ Այսպէս անցնում է թեթև տեսակը։

Ծանր դիֆտերիտն առաջանում է կամ վերև նկարագրած թեթև տեսակից, կամ, ինչպէս առաջ ասացինք, հէնց սկզբից առանձին ծանր թունաւոր բացիլներով վարակուելուց։

Եթէ թոյլ տեսակից է առաջ գալիս, սկզբում եղած ցած աստիճան տաքութիւնը սկսում է աւելի բարձրանալ, իսկ բկի սպիտակ կետերն սկսում են միանալ և տարածուել, այնպէս որ մի քանի ժամից յետոյ արդէն բկի ամբողջ անցքը ծածկուած է լինում սպիտակ փառով, որը շուտով անցնում է փափուկ քիմքի և լեղուակի վրայ։

Բայց երբ սաստիկ դիֆտերիտն սկսում է ինքնուրոյն կերպով, ամենից առաջ երեխան սկսում է սաստիկ տաքացնել, որը բարձրանում է մինչև 40°, յաճախ դրա հետ միասին լինում է և դող, սիրտը քանդւում է, (յետ է գալիս)։ Թուքը շատ դժուարութեամբ է կուլ տալիս, երեխան թուլացած վայր է ընկնում և գանկատւում է գլխացաւի և ընդհանուր մարմնի թուլութեան վրայ։

Պէտք է ասել, որ մինչև չորս տարեկան երեխաները չեն կարողանում հասկացնել ծնողներին իրանց բկի ցաւը, այնպէս որ այդ հանգամանքը պէտք է ի նկատի ունենալ և շուտ-շուտ նայել բկին, եթէ դիֆտերիտի միւս կարծիքաւոր նշաններ երևան են գալիս։

Հիւանդութեան առաջին ժամերում նկատւում է միայն բկի կարմրութիւնն, իսկ օրուայ վերջին, և կամ երկրորդ, երրորդ օրը ամբողջ բուկը ծածկւում է փառով։ Այնուհետև երեխայի դրութիւնը կախուած է լինում հիւանդութեան ընթացքից։

Եթէ թեթև տեսակն է, այնպէս է անցնում ինչպէս վերև նկարագրեցինք, և երեխան առողջանում է. իսկ եթէ սաստիկ տեսակն է, փառերն աւելի ու աւելի մեծանում և տարածւում են։ Այդ ժամանակ եթէ նայելու լինինք երեխայի բուկը, կը տեսնենք սպիտակ կամ դեղնագոյն, իսկ ամենավատ դէպքում մոխրագոյն փառ, որ համարեայ բոլորովին ծածկում է բկի անցքը։ Փառերն իրենց եզերքներով ամուր կպած են լինում առողջ մասերի հետ։ Ցաւի սաստկութիւնից հարևան մասերն ուռչում են, բկի անցքն աւելի ևս նեղանում է, որից առաջանում է շնչարգելութիւն, հիւանդի բերանի թուքը թանձրանում է

և թքելն անկարելի է լինում, *մինչդեռ* թեթև դէպքում թուքը լինում է ջրալի և հեշտութեամբ բերանից դուրս է թափւում։

Այսպիսի ծանր դէպքերում միշտ ուռած են լինում պարանոցի և լեզուատակի գեղձերը, որոնք իրար հետ միանալով՝ ձևացնում են մեծ խուլ, որը հասնում է երբեմն մինչև կուրծքը։ *Ուրեմն դրսի ուռոյցքը նշան է հիւանդութեան սաստիկ շինելուն։* Եթէ երեխայի կազմը դիմացկուն է, նրա տաքութիւնը իջնում է, փառերը ջրակալում են, նրանց եղերքն սկսում են նկատուել ու կամաց կամաց պոկուել։ Ահա այդ ժամանակ երեխայի բկում կարելի է տեսնել կախուած ահագին մեծութեան «վաշ»-եր, որոնք մի առժամանակ ոչ պոկւում դուրս են գալիս և ոչ կուլ են գնում։ Երբեմն պատահում է որ երեխայի քնած ժամանակ պոկուած կտորը ընկնում է շնչափողի վրայ և խանգարում է շնչառութիւնը, առաջ բերելով ասստիկ խրխռոց։ Երբ բկի փառն ամբողջապէս պոկւում, ընկնում է միանգամից, նրա վրայ կարելի է տեսնել բկի բոլոր ձևերը դուրս եկած, օրինակ, լեզուակի մասը ներկայացնում է գլխանի պէս տոպրակ, փառից հիւսած, նմանապէս երևում են գեղձերի տեղերը։

Փառը պոկուելուց յետոյ տեղը մնում է բացուած

կարմիր վերքեր, որոնք դեղ քսելիս և բան ուտելիս *խիստ ցաւում են*, այնպէս որ զարմանալի չէ, երբ հիւանդը առողջանալիս աւելի է նեղանում դեղ գործածելուց, քան թէ հիւանդութեան նոր սկսած ժամանակ։

Եթէ 6—8 օր անցնելուց յետոյ փառերը չեն պոկւում, ընկնում, նշանակում է որ նրանք տարածւում են դէպի կոկորդը։ Դրա սկզբնական նշաններն այսպէս են լինում։ Երեխայի ձայնը կՏշտանում է և սկսում է խզղալ, նրա հաղը նման է պառաւած շների հաջելուն, (հաղալու այս ձևը շատ նման է «խռուկի»)։ Օրէցօր հաղը ուստանում է, միևնոյն ժամանակ երեխան չի կարողանում առաջուայ նման ազատ շունչ քաշել։ Սրանց համար աւելի դժուար է լինում ներշնչելը, քան թէ արտաշնչելը։ Այս դրութեան մէջ մէկ օր էլ է անցկացնում երեխան։ Հետևեալ օրը, երբ բոլորովին փակւում է կոկորդի անցքը, երեխան օդի պակասութիւնից արդէն չի կարողանում հանդարտ տեղում կենալ։ Նա մահճակալից գնում է մօր գիրկը, այնտեղ էլ չը դադարելով՝ նորից ցանկանում է իւր տեղում պարկել. երբ տեսնում է, որ այդ միջոցն էլ չի օգնում, սկսում է գլուխը մի կողմից միւսը դարձնել, ոտ չոչել, ձեռքով տրորել պարանոցը։

այդպիսով ուզում է օդ ներս լցնել կուրծքը։

Այդ գրութեան մէջ էլ մի առժամանակ երեխան տանջուելուց յետոյ, ուժասպառ, թուլացած վայր է ընկնում, ոչ ուտել և ոչ խմել է ուզում, նաև այլևս չի հետաքրքրուում շրջապատողներով։ Նրա կիսատ շնչառութիւնն արագանում է, ոտ ու ձեռքերը սառչում են, շրթունքն ու աչքերի շուրջը կապտում են, այն ինչ երեսը մնում է գունատուած։ Նրա ճակատին սառը քրտինք է գալիս, մարմինն անդգայանում է և երեխան վերջապէս մեռնում է։

Երբեմն երեխան թուլացած ժամանակ տեղից թռչում և իսկոյն նորից վայր է ընկնում առաջուանից աւելի ուժասպառ։

Որքան է տևում երեխայի այդ տանջող գրութիւնը, դժուար է որոշել։ Այս կարելի է ընդունել իբր օրէնք, որ քանի երեխայի տարիքը փոքր են, այնքան հիւանդութիւնը շուտ է նրան յաղթում, մօտաւորապէս 2 – 6 օրուայ մէջ։ Իբրև բացառութիւն պատահում է և այնպէս, որ հիւանդի շարչարանքը տևում է մինչև 10—12 օր։ Վերոյիշեալ նկարագիրը վերաբերում է ծանր դէպքերին։ Ուրիշ բան է ստացուում, երբ դիֆտերիտի թունաւոր բացիլների հետ միանում են և ուրիշ ձևի բացիլներ։ Այս վերջինները սաստ-

կացնում են դիֆտերիտի թոյնի ոյժը և առաջացնում աւելի մեծ փոփոխութիւն, թէ ընդհանուր կազմուածքի մէջ և թէ երեխայի կոկորդում։ Հիւանդի բուկը նայելիս՝ նկատուում են մութ մոխրագոյն կամ շատ անգամ բոլորովին սև փառեր։ Բերանից սաստիկ գարշահոտութիւն է գալիս, նոյն մոխրագոյն թուքը բերանում թանձրանում և կպչում է լեզուին կամ քմքի միւս մասերին։ Թէ լեզուն և թէ շրթունքը չորանում են ու ծածկուում նոյնպէս կեղտոտ փառով։ Սրա հետ միասին կարելի է տեսնել ահագին ուռոյցք դրսի կողմից, որն իջնում է մինչև կրծքի կէսը։ Այս երևոյթը ցոյց է տալիս որ հիւանդն անել դրութեան մէջ է և հաւանական է որ հիւանդի կեանքը մէկ օրից աւել չի տևել։

Բացի այդ նշաններից, հիւանդի քթածակերից հոսում է կեղտոտ, արիւնոտ ջուր, որը չորանալով կպչում է քթի շուրջը ճաքեցնում և առաջ է բերում վէրքեր։ Հիւանդը գունատուում և ուժասպառ է լինում, ձեռքի դարկերակը թոյլ և դանդաղ է խփում, ձեռքերն ու ոտքերը շատ անգամ սառչում են։ Ցաւալին այն է, որ շատ անգամ այդ դրութեան մէջ երեխաների ուշքը տեղն է լինում մինչև մահը։ Նրանք խելացի խօսակցութիւններով, իրանց դրութեան մասին, շրջապատողների սիրտը կտրատում են։

Գայ հիւանդութեան մի այլ արբանեակ տեսակ կա, երբ երեխաները մեռնում են մէկ կամ երկու օրուայ մէջ։ Այսպիսի դէպքում ժամանակ էլ չի լինում, որ երեխան դան դիֆտերիտի վերոյիշեալ բոլոր նշանները։

Միայն բկից չի սկսում դիֆտերիտը։ Կան դէպքեր, երբ ամենից առաջ փառերը երևում են քթի մէջ, հարբուխի արիւնոտութեան հետ միասին։ Փառերը նմանապէս լինում են միայն լեզուի, քմքի, աչքերի, շրթունքների կաշու (մորթի) և միւս անդամների վրայ։ Լինում են դէպքեր, երբ կարծես, առանց պատճառի մատների, եղունգների տակն սկսում է թարախակալել, մէկ մատից անցնել միւսը։ Դա դիֆտերիտի այն տեսակն է, որ սկսուել է մատների ծայրերից։ Այդ դէպքերը հազուագիւտ են. շատ էլ նշանակութիւն չունին ձեզ համար։

Մահից ազատուած երեխաները դեռ ազատ չեն կարող համարուիլ դիֆտերիտի վատ հետևանքներից։ Այս հիւանդութիւնը հէնց նրանով է վատ, որ շատ անգամ բոլորովին երեխան առողջանալուց յետոյ էլ չի կարող մահից ազատուել լինել։ Պատահում է այնպէս, որ երեխան բոլորովին լաւանում, վեր է կենում անկողնից և դառնում է իւր առողջ ժամանակուայ սովորութիւն-

ներին ու զբաղմունքներին։ Յանկարծ բժիշկին իմացնում են, որ երեխան խաղալիս՝ ռչաթահոնց ոռ մեռաւ։ Այս պատահմունքը բժշկի մէջ ցաւ է առաջ բերում, բայց ոչ զարմանք։ Մենք արդէն ասացինք, որ բացիլները թոյն են արտադրում իրանցից, որը ներգործում է աւելի շուտ սրտի վրայ, իբր աւելի նուրբ-նեարդային հիւսուածքի, քան թէ մարմնի ուրիշ մասերի վրայ, որի շնորհիւ սրտի ոյժը թուլանում է և այլևս չի խփում։ Ահա այս յանկարծակի մահը նշան է սրտի թուլութեան, թոյնի ազդեցութեան տակ։

Բայց երբ թոյնը ներգործում է աւելի մարմնի ուրիշ մասերի վրայ, քան թէ սրտի վրայ, այդ դէպքում երեխան չի մեռնում, այլ նոյն թոյնի շնորհիւ առաջ են գալիս անդամալուծութիւն այսինքն մարմնի զանազան անդամների թուլութիւն, որից յետոյ, իհարկէ, այդ անդամը այլևս չի կարողանում իւր նշանակած գործը կատարել։

Ամենից առաջ և հեշտ թուլանում է փափուկ քիմքը։ Դրա նշանները հետևեալներն են. – երեխան սկսում է լսուել քթի մէջ, չի կարողանում հանգցնել վառած մոմը, ջուր խմելիս, քթածակերից յետ է թռչում; շատ անգամ կոշտ բաներ ուտելիս՝ ստամոքսն ընկնելու փոխանակ մտնում են թոքերի մէջ ետ հոգ է առաջ բերում։ Եթէ հա-

զալուց կերակրի այդ կտորը դուրս չի գալիս, մնում է թոքերի մէջ, *դիֆտերիտ*, իւր հետ փրթեցնելով նաև թոքերը. ուստի հիւանդը կարճ միջոցից յետոյ մեռնում է դրանից առաջացած *թոքերի բորբոքումից*։ Պատահում է նաև անդամների ձեռքերի, ոտների թուլութիւն. երեխաները չեն կարողանում մատ դալ և ձեռքերով բան վերցնել, այնպէս որ հիւանդներն ստիպուած են լինում ամիսներով անկողնում պարկած մնալ և կերակրուել ուրիշների օգնութեամբ։

Լինում են դէպքեր էլ, որ երեխաների միայն աչքերն են վնասւում, օրինակ, կարդացող երեխան այլևս չի կարողանում կարդալ, գրել, որովհետև տառերը չի տեսնում։ Մխիթարականն այն է, որ այդպիսի ծանր դէպքերից յետոյ հիւանդների մեծամասնութիւնն առողջանում է վերոյիշեալ անդամալուծութիւններից, թէև ճիշդ է, դրա համար պահանջւում է 2—3 ամիս ժամանակ և ուշադիր բժշկութիւն։

Անդամալուծութիւն ստացող հարիւրից մօտաւորապէս 8—10 հոգի մեռնում են։

Վերջապէս դիֆտերիտի վտանգաւոր հետեւանքներից մէկը պէտք է համարել և այն չափից դուրս արեան պակասութիւնը, որ առաջ է գալիս համարեայ ամեն թէ ծանր և թէ թեթև հիւանդ-

գութիւնից յետոյ, և որի առաջը մեծ դժուարութեամբ կարելի է լինում առնել։

Ահա ձեզ դիֆտերիտի բոլոր նշանները, որոնց եթէ լաւ մտքերդ պահէք, կարող էք ինքներդ ճանաչել և ժամանակին դիմել բժշկին՝ առաջն առնելու համար։

Ամփոփենք ուրեմն մեր ասածները հիւանդութեան նշանների մասին։

Եթէ երեխան սկսում է տաքացնել և գանգատուել գլխացաւի մասին, ամենից առաջ պէտք է դուք համոզուիք, որ *դա դիֆտերիտ* է թէ չէ։ Դրա համար պէտք է հաստատապէս կարողանաք ասել — կա՛յ արդեօք բկի գեղձերի վրայ *ապիտակ փառ*, թէ ո՛չ. իսկ այդ բանը որոշելու համար, դուք պէտք է սովորիք *ջոկել առողջ բուկը բորբոքուածից*։ Այդ բանը շատ անհրաժեշտ է և դժուար չէ փորձել. հարկաւոր է միայն գդալի պոչով երեխայի լեզուն վայր սեղմել։ Բուկը ցոյց տուողը ցաւ չի զգում, այդ անելուս, նա հանգիստ կը բանայ բերանը և դուք կարող էք խորը նայել։ Այդ ժամանակ ձեզ հարկաւոր է միայն աշխատել տեսնել, կա՛ն արդեօք գեղձերի, լեզուակի, քմրի վրայ *ապիտակ կետեր* կամ արդէն մեծացած փառեր, թէ ո՛չ։ Նոյն փորձերը շատ յաճախ պէտք է անէք երեխաների վրայ և առողջ ժամանակ, որպէս զի նրանք սովորեն հեշտութեամբ բուկը

ցոյց տալ հարկաւոր դէպքում, իսկ դուք՝ ջոկել առողջը հիւանդից։ Անփորձ մարդը կարող է հեշտութեամբ չը նկատել մինչև անգամ ահագին փառերը, եթէ և բեխան լաւ չի բաց անում բերանը, որոնք անկարելի կը լինէր չը տեսնել լաւ ցոյց տալուց։

Ուրեմն ուշադիր նայելուց, եթէ ոչինչ չը նկատեցիք, կարելի է առժամանակ հանգիստ լինել բկացուից, բայց միևնոյն օրը երեկոյեան, դեռ աւելի շուտ, անպատճառ պէտք է *ձորից ձայնել* բկին, որովհետև առաւօտից մինչև երեկոյ չեղած փառերը կարող են բաւականաչափ առաջ գալ, կամ կարող է պատահել երեկոյեան նայելիս յաջողեցնէք նկատել այն, ինչ որ առաջէ անգամ աչքի չէր ընկել։ Եթէ բուկը միայն կարմրած լինի, դա դեռ ոչինչ վտանգաւոր բան չէ, որովհետև համարեայ միշտ մրսելուց դա կարող է պատահել, իսկ եթէ, ընդհակառակը, տեսնում էք սպիտակ փառեր, պէտք է որոշէք դիֆտերիտ է այդ, թէ հասարակ բկացու։ Եթէ անկասկած տեսնում էք մի քանի տեղ դեղձերի վրայ ջոկ-ջոկ ոսպի չափ սպիտակ կետեր, սաստիկ կարմրած մսի վրայ, այդ բանը նշան է *թնթռռ բկացաւի*։ Իհարկէ չպէտք է մոռանաք, որ դրանք կարող են միանալ և տալ դիֆտերիտի փառեր, այսինքն

հասարակ բկացուը դիֆտերիտի բացիլներից վարակուելով դառնում է դիֆտերիտ. ուստի, որպէս զի երկմիտ չը լինինք, ամենից լաւն է անմիջապէս դիմել բժշկին։ Նա հեշտութեամբ կ'որոշէ վտանգաւորը անվնաս ցաւից և իսկոյն ձեռք կ'առնի հարկաւոր միջոցները։ Իսկ եթէ միանգամից տեսաք արծաթէ 5 կոպէկանոցի չափ կամ դրանից քիչ մեծ սպիտակ փառ գեղձերի վրայ կպած մի կամ երկու կղմում և երբ աշխատեցիք փառը թրջած բամբակով պոկել ու չըյաջողուեց, իսկոյն առանց յետաձգելու պէտք է դիմէք բժշկին որ քանի դեռ ժամանակը չէ անցել, հնար գտնի ձեր երեխային ազատելու։

Անյապաղ բժշկին հրաւիրելը նրա համար, անհրաժեշտ է, որ ինչպէս ցոյց են տալիս փորձերը, դիֆտերիտը ինչքան էլ սաստիկ տեսակը լինի, եթէ նկատել էք առաջին օրուանից և իսկոյն միջոցներ էք ձեռք առել, մեծ յոյս կարելի է ունենալ երեխայի առողջանալու վրայ, ընդհակառակն, թեթև տեսակ դիֆտերիտը մեռցնում է երեխային հէնց նրա համար, որ ծնողները ժամանակին չեն դիմում բժշկին և օգնութիւնը ուշանում է։

Ձեզ համոզելու համար բաւական է ասել

ըստ Պրոֆ. Ֆիլատովի, եթէ հիւանդանոցում առաջին կամ երկրորդ օրը դիմեցը բժշկի, 100 հիւանդից կամ ոչ միայն չի մեռնիլ եւ կամ ամենաշատը մեռնում են 2 հոգի. այդ միտքն եղրակացութեանն եկել եմ և ես իմ բժշկական փորձերից։

Ալէքսանդրապոլում մեռնողները անդին տակոս են կազմում. որա պատճառը ոչ թէ բժշկութեան անոյժ լինելն է, այլ այն է, որ հիւանդութեան սկզբում չեն դիմում, թոյլ են տալիս նրա զարգանալուն, իսկ յետոյ շատ ուշ, երբ արդէն հիւանդը կամ շնչարգել է լինում կամ մարմինը սառչում է, դիմում են բժշկին և պահանջում են առողջացնել հիւանդին։ Այդ դէպքում ինչ կարող է անել բժիշկը, կամ շպէտք է ձեռք տայ, որ հակառակ է օրէնքի ու խղճի, կամ ինչ էլ որ անի, երեխային մահից անկարող է ազատել, որովհետև հիւանդութիւնը երեխային արդէն յոլոված է լինում։

Շատ անգամ բժիշկները մօտաւորապէս կարողանում են առաջուց զուշակել թէ ինչ ե՛լք կ՚ունենայ հիւանդութիւնը, կ՚առողջանա՞յ հիւանդը, թէ կըմեռնի.

Ուղիղը նախատեսելու համար, պէտք է աչքի առաջ ունենալ հետեւեալ պայմանները։

Եթէ այդ համաճարակի ժամանակ առհասարակ առողջացողները շատ են, ուրեմն հիւանդի առողջանալու յոյսն էլ շատ է։

Ընդհանրապէս փոքր երեխաներին յաւն աւելի շուտ կարող է յոլովել, քան մեծերին։ Ծծկեր երեխաները լաւ են դիմանում ցաւին։

Բերանի մէջ փառերը որքան շատ են տարածուած, այնքան վտանգաւոր է երեխայի դրութիւնը։ Փառերի շատ լինելը ցոյց է տալիս, որ արդէն հիւանդութիւնը տեւել է օրինակ 5—6 օր։

Հիւանդի բերանից դարշ հոտ դալը, կամ քթից արիւն դալը վատ նշաններ են և քիչ յոյս են տալիս առողջանալու։

Ծանր նշաններից մէկն էլ բկի դրսի կողմից ուռոյց երևալն է, մանաւանդ, երբ ուռոյցը իջնում է կուրծքի վրայ։ Թեթև դէպքերում երբէք այդպիսի ուռոյցը չէք տեսնիլ։ Դժբախտաբար հասարակ ժողովուրդը գլխաւորապէս այս շրջանում է դիմում բժշկի, որովհետև այդ դրսի ուռոյցին է նա նշանակութիւն տալիս. բայց դա արդէն շատ ուշ է։

Դիֆտերիտն եթէ թողնենք առանց բժշկութեան, ահագին կոտորածներ կ՚անի, ինչպէս էր սրանից մի քանի տարի առաջ։ Հիւանդներից հազիւ 100-ից 20 հոգի էին առողջանում։

Իսկ այժմ, ինչպէս վերևն ասացինք, ժամանակին միջոց ձեռք առնելով՝ 100-ից միայն երկու հոգի են մեռնում։

Այժմ բժշկութիւնը գտել է դիֆտերիտի առաջն առնելու միջոցը։ Դուք շատ օրինակներ էք տեսել, որ այդ հիւանդութիւնը բոլոր բժիշկները բժշկում են գլխաւորապէս պատուաստելով— կաշու տակը դեղ լցնելով։ Այդ դեղը շիճուկն է,*) որի օգնութիւնը երևում է սրսկելուց 24 ժ. յետոյ։

Առ այժմ ընթերցողի ուշադրութիւնն եմ դարձնում մի քանի ամենակարևոր զգուշութեան միջոցների վրայ, որովհետև աւելի լաւ է զգոյշ լինել չը հիւանդանալ, քան թէ յոյսը դնելով բժշկի օգնութեան վրայ, զանցառութեան տալ առողջապահական կանոնները և ենթարկել երեխաներին վտանգների։

Երբ իմանում էք, որ ձեր բարեկամի կամ դրացու տանը դիֆտերիտով հիւանդ կայ, պէտք է այդ տան հետ ամեն տեսակ յարաբերութիւն-

*) Ծանօթութիւն։ Շիճուկը պատրաստում են ձիու արիւնից, որին երկար շաբաթների ընթացքում թունաւորում են կամաց-կամաց նոյն դիֆտերիտի թոյնով։ Երբ ձին ընտելանում է այդ թոյնին, նրա արիւնը երակից դուրս են թողնում և հաւաքում են մաքուր տեղ։ Երբ արեան թանձր մասերը բաժանւում են, մնացած ջրային մասը, որ շիճուկն է, որոշ չափերով լցնում են մանր սրսուակների մէջ, գործածելու համար։

ներ կտրել։ Քանի հեռու մնաք վարակուած տներից, այնքան ապահով կը լինէք վարակուելուց։

Բաւական չէ որ դուք չը գնաք, եթէ ձեր տանը դիֆտերիտով հիւանդ կայ, այլ եկողներին էլ պէտք է ամենախիստ կերպով արգելէք՝, որ հիւանդի սենեակը չը մտնեն։ Աւելի լաւ կը լինի, եթէ խոհոյն դռնից յետ դարձնէք, բացատրելով, որ ձեր տունը մտնելը վտանգաւոր է եկողի համար. հասկացողն, իհարկէ, չի նեղանալ, իսկ եթէ նեղանայ էլ, փոյթ չէ, դուք այն արէք, ինչ որ թելադրում է ձեր խիղճը. յետ դարձողներն էլ ժամանակին հասկանալով գործի էութիւնը, շնորհակալ կը լինեն ձեզանից։

Աշխատանքատեղում և առհասարակ ամեն տեղ, շատ անգամ բանի տեղ չը դնելով զգուշութիւնը, գնում են մեռնող երեխայի ծնողների տունը մխիթարելու, կամ ննջեցեալի հետ գնում են եկեղեցի, իսկ կանայք ընկնում են դիակի վրայ ու լայ լինում և այսպիսով վարակիչ հիւանդութիւնը իրանց տուն բերում։ Տերութիւնն այդ վտանգը նախատեսելով՝ արգելում է վարակիչ հիւանդութիւնով մեռածներին եկեղեցի դնելը։ Սակայն ժողովուրդը փոխանակ շնորհակալ լինելու, որ իւր վրայ մտածում են, շատ անգամ դիմում է բժշկներին, և իզուր խնդրում նրանց, որ «խաթրի»

համար այնպիսի վկայական տան, որով թույլ տրուի եկեղեցի դնելու։

Տարաբախտաբար այս բանում շատ անգամ օգնում են ձեզ մեր տգէտ քահանաները։ Հասկանալի է որ, եթէ նրանք մի փոքր կրթուած լինէին, կ'իմանային որ իրանց ծուխերին հաճոյանալու համար, չի կարելի հակառակ բժշկի վկայականի, դիֆտերիտից մեռածներին ծածուկ եկեղեցի դնել և հիւանդութիւնը քաղաքում տարածել։

Հիւանդ երեխային որքան կարելի է, պէտք է կտրել առողջների հետ յարաբերութիւն ունենալուց, որպէս զի առողջը չը վարակուի։ Ջոկած առողջ երեխաները զգուշութեան համար պէտք է ամեն օր միքանի անգամ ողողեն բուկը բորակաթթուով (борная кислота), այն առանց բժշկի դեղատոմսի կարելի է գնել դեղատներից։

Դրա գործածութիւնն այսպէս է։ Մէկ թէյի գդալ բորակաթթուն լցնել մէկ բաժակ ջրում, հալեցնել և նրանով ողողել բուկը, օրական մի քանի անգամ։

Վերջին ժամանակ, շիճուկի գլուխից յետոյ, իբրև նախազգուշութիւն, առողջներին էլ են շիճուկ սրսկում։ Այդ միջոցը, ճիշտ է, պաշտպանում է երեխային հիւանդանալուց, բայց դժբախտաբար՝ շատ կարճ ժամանակով, ընդամենը միայն

մէկ ամիս։ Եթէ հնար լինէր շիճուկի այն տեսակը պատրաստել, որով կարելի լինէր երկար տարիներ պաշտպանել երեխաներին վարակուելուց, ինչպէս ծաղկից, դրանով մարդկութիւնը ազատուած կը լինէր երեխաներին կոտորող այդ հիւանդութիւնից էլ։

Որովհետև արեգակի լոյսի ներգործութիւնից և օդի խաղալուց ոչնչանում են դիֆտերիտի բացիլները, ուստի և պէտք է հոգալ, որ բնակարանը լինի *ջոր ընդարձակ, շոռաւոր ու օդը մաքրած օրը միքանի անգամ* *)։

Ծանօթութիւն։ Իմ բազմաթիւ դիտողութիւնները ցոյց են տուել, որ Ալէքսանդրապոլի որոշ թաղերում դիֆտերիտն աւելի է բոյն դրել, դրանք են՝ Հողէպլանը, կաթոլիկների եկեղեցու շուրջը, գիւղացոց մասը։ Այս տեղերում տները շինուած են խառն ի խառն, զրկուած են լոյսից, նեղ են և մութ, որով նպաստում են թէ դիֆտերիտի և թէ ուրիշ վարակիչ հիւանդութիւնների տարածուելուն, մանաւանդ, եթէ ինկատի ունենանք և այն, որ երեխաները ամբողջ օրը խաղում են փողոցներում, հարևանների երեխաների հետ, սեփական բակեր չունենալու պատճառով։

Բոլորովին այլ պայմանների մէջ են փանտէրի ընդարձակ, նոր ձևի տները, նոյնպէս՝ և քաղաքի արևմտեան «սլաբոդկա» կոչուած մասի տները։ Երեխաները խաղում են իրանց տների լայն բակերում և համարեայ կարուած են դրացու տղաների յարաբերութիւնից, հիւանդութեան դեպքումն էլ, որը քաղաքի այդ մասերում համեմատաբար շատ քիչ է պատահում, նրանք արդէն բաժանուած են մեծ պատերով առողջներից, ուստի ցաւը տարածուելու նպաստաւոր պայմաններ չունի։

Ցանկալի է, որ այդ նեղ թաղերի բնակիչներն աշխատեն Փանտէրերում տուն ունենալ և քաղաքը, կարծում եմ, աչքի առաջ ունենալով բնակիչների առողջապահական պայմանները, առանց վարձի, կամ էժան գնով տեղ կը տայ ցանկացողներին։

Հիւանդի սենեակում չպէտք է ուտելիք պահել, այն էլ առանց բերանը ծածկելու։

Այն անձը, որ խնամում է հիւանդին, պէտք է հագած լինի այնպիսի շորեր, որոնց հեշտութեամբ կարելի է *ջրով լուանալ*, օրինակ չվեդէն։ Խօսք չկայ որ մահուդը դժուար է լուացուում, ուստի այդպիսի հատ կտորներից կարուած շորերը, պէտք է բարակով փոխարինել։

Հիւանդապահները հիւանդի սենեակում ոչինչ չպէտք է ուտեն կամ խմեն, որպէս զի չլինի թէ կերակրի հետ բացիլներ ներս ընդունեն։

Հիւանդի պարկած սենեակից պէտք է դուրս տանել *բոլոր աւելորդ իրերը*, օրինակ գորգերով ծածկած թախտերը, մանաւանդ փափուկ բազկաթոռները, աւելորդ սեղանները և աթոռները։ Այս բանը երկու միտք ունի. նախ որ քանի քիչ իրեր լինին սենեակում, այնքան օդը առատ կը լինի և մաքուր, իսկ երկրորդ որ գլխաւորն է, հիւանդի առողջանալուց յետոյ, երբ պէտք կը լինի իրերն ախտահանել (ինչ որ անպայման պէտք է) ախտահանողների գործը հեշտ կը լինի և հասարակ։ Գիտէք թէ որքան դժուար է բացիլները մաքրել, օրինակ մի խալիչից (գորգ) որի ամեն մէկ թելի տակ բուն են դրել միլիոնաւոր բացիլներ։ Այդպիսի իրերը որքան և բարեխղճաբար ախտահանուած լինին, այնուամենայնիւ, դարձեալ չի կարելի երաշխաւորել, թէ նրանք մաքրուած կը լինին։

Հիւանդի առողջանալուց կամ մեռնելուց յետոյ հարց է առաջ գալիս, թէ ինչ անել նրա գործածած իրերի հետ. ինքս շատ անգամ ականատես եմ եղել, թէ ինչպէս մեծ բարեհոգութեամբ հիւանդի տէրերը անկողինը տուել են մէկ ազքատի, վերմակը միւսին, բարձը՝ երրորդին, հագի շորերը՝ չորրորդին և այլն։ Պարզ է, որ այդպէս վարուողները ամենևին իրանց մտքովը չեն անցկացնում, թէ այդպիսով նրանք չարագործութիւն են անում, և ոչ թէ չքաւորներին են օգնում։ Ազքատները գոհ սրտով և մեծ շնորհակալութեամբ ստացած նուէրները տուն են տանում։ Մէկը մեռնողի շորերը հագցնում է իւր փոքրիկին, միւսը բարձը դնում է իւր մանուկի գլխի տակ և հետևանքն այն է լինում, որ մի քանի օրից յետոյ այդ անմեղ մանուկները գոհ են գնում թէ իրանց մօր և թէ բարեբարի տպիտութեան։ Պէտք է մի անգամ ընդ միշտ համոզուել, *որ դիֆտերիտով հիւանդի շորերը նոյնքան վտանգաւոր են, որքան եւ իրանք հիւանդները*։ Ուրեմն, փոխանակ հիւանդի իրերը սրան-նրան բաժանելու և հիւանդութիւնը տարածելու քաղաքի մէջ, հարկաւոր է հիւանդի

և խաղալիքները հաւաքել միասին ու այրել։ Այս է ախտահանելու ամենադրական միջոցը։ Ահա թէ ինչու համար մենք խորհուրդ ենք տալիս խալիչաներն ու սենեակի աւելորդ իրերը դուրս բերել հիւանդի սենեակից։

Ինարկէ ազքատների համար շատ դժալի կը լինի այրել վերջին ցնցոտիները։ Այս դէպքում բժիշկը դեղ կտայ, որը պէտք է լուծել ջրի մէջ և դրանով լուանալ հիւանդի շորերը։ միայն այդպիսով կարելի է ապահով լինել, որ բացիլները ոչնչացել են և գործածած իրերը ուրիշին վնասակար չեն լինի։ Բարեկարգ և հարուստ քաղաքներում, քաղաքային վարչութիւնն ստիպում է այրել վարակուած իրերը և շորերը, իսկ դրա փոխարէն տիրոջը վարձատրում է։ Շատ քաղաքների վարչութիւնները պահում են ախտահանիչ մեքենաներ, որտեղ չնչին վարձատրութեամբ կամ շատ անգամ առանց վարձատրութեան, իրենք են տանում հիւանդի բոլոր իրերը, ախտահանում տաք գոլորշիով և վերադարձնում հիւանդի տիրոջը, առանց որևէ վնաս հասցնելու նրանց։*)

*) Լսում ենք որ Ալէքսանդրապոլումն էլ արդէն ձեռնարկել են մի այդպիսի հիմնարկութիւն շինելու։

Իրերը ախտահանելուց յետոյ, հարկաւոր է, այն սենեակը կամ ամբողջ տունը, որտեղ պարկած էր դիֆտերիտով հիւանդը, առաջուց ախտահանել որպէս զի մաքուր իրերը ներս բերելիս կրկին չվարակուին նրանք։ Սկզբում ախտահանելու համար սուլէմայի խառնուրդով սրսկում էին յատակը, պատերն ու առաստաղը։ Հասկանալի է, որ սրսկելու այս ձևը բոլորովին չէր կարող մաքրել տունը վարակիչ բացիլներից, որովհետև դժուար է ենթադրել, որ ախտահանիչ դեղը դիպած լինիր տան բոլոր անկիւններին, քարերի և տախտակների բոլոր ճեղքուածքներին, որոնց մէջ պահուած է վարակիչ թոյնը։ Այս միջոցով միայն այն բացիլները էին ջնջւում, որոնց կպել էր սուլէման, մնացած տեղերում բացիլներն ապահով կը մնային։

Այժմ փոխանակ սրսկելու, *ախտահանիչ դեղը գոլորշիացնում են* զանազան մեքենաների միջոցով և թոյնում սենեակի մէջ։ Թունաւոր գոլորշին հաւասարապէս տարածւում է տան մէջ, մտնում է պատերի, յատակի, առաստաղի բոլոր ճեղքուածքների մէջ ու սպանում, բնաջինջ անում բոլոր բացիլները։ Այս միջոցը նոր է, բայց բաւականին տարածուած և պէտք է պահանջել, որ գործածած բոլոր շորերը, որոնք էժանագին են,

ախտահանողը միայն այդ ձևը գործ դնէ։

Այս կերպ խնամքով ախտահանելուց յետոյ կարելի է համեմատաբար հանգիստ սրտով ասել, որ սենեակը, իւր կահ-կարասիքով այլևս վտանգաւոր չէ առողջների համար։

Իսկ ինչ վերաբերում է *բժշկութեան, դա, ինարկէ, բժշկի գործ է։* Դուք միայն վերև առուած միջոցներով պէտք է հասկանաք ժամանակին հիւանդութիւնը և չ'ուշացնէք դիմել բժշկին։ Եթէ դիֆտերիտ լինի, նա կը պատուաստի և ձեզ զանազան խորհուրդներ կը տայ, որոնք անպայման պէտք է կատարէք։

Երեխան առողջանալուց յետոյ հարց է առաջ գալիս. Ե՞րբ կարելի է երեխային ուսումնարան թողնել, կամ թոյլ տալ առողջ երեխաների հետ խաղալու։

Միայն այս պայմաններում մենք կարող ենք հաստատ ասել, որ կուռում ենք հիւանդութեան դէմ և յուսով ենք որ դիֆտերիտը կը դարձնենք այնպիսի մի հաղուագէպ հիւանդութիւն, ինչպիսին է նա ներկայումս արտասահմանում, հակառակ դէպքում տարեկան հարիւրաւոր երեխաներ իզուր տեղը զոհ կը տանք այն թշնամուն, որը մեր դէմ կռուելու այժ չունի, եթէ միայն ցանկանանք։

Այդ հարցին կառավարութեան օրէնքն այսպէս է պատասխանում.—Երբ երեք շաբաթ անցնում է առողջանալուց յետոյ, այսինքն այն օրից, երբ բկի միջի կամրուտինը անցնում է և խոշորացոյցով քննելուց այլևս թուքի մէջ բացիլներ չեն երևում։

ՄԵՐ ԱՋԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ժանդարմա — (սպառուած) . . 5 կոպ.

Մամուլի տակ է.

Թրախտմա . . . . . 5 կոպ.

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

Դիմել՝ Александрополь,
Книгопродавцу Степанянцъ.